ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ՀՐԱՄԱՆ

ԹԻՎ 027/2015-Ա

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԵՎ ԴԱՏԱԽԱԶՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԲԱՇԽՈՒՄԸ ԸՍՏ ՓՈՐՁԱՇՐՋԱՆԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՓՈՐՁԱՇՐՋԱՆԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

12.06.2015թ. ք. Երևան

Ղեկավարվելով «Արդարադատության ակադեմիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 23-րդ հոդվածով, 24-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով, հիմք ընդունելով Արդարադատության ակադեմիայի կառավարման խորհրդի կողմից 30.01.2015թ. թիվ 35-Ա և 36-Ա որոշումներով հաստատված Արդարադատության ակադեմիայի 2015թ. համապատասխան ուսուցման ծրագրերը, Արդարադատության ակադեմիայի կառավարման խորհրդի կողմից 06.06.2014թ. ընդունված թիվ 14-Լ որոշումը, Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհրդի 10.06.2015թ. թիվ 30Լ որոշումը, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալի 03.06.2015թ. թիվ 30/9-22-15 գրությունը՝

Հրամայում եմ

1. Հաստատել Արդարադատության ակադեմիայի 2015թ. ուսումնական տարվա դատավորների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց բաշխումը ըստ փորձաշրջանի ղեկավարների՝ համաձայն Հավելված 1-ի:
2. Հաստատել Արդարադատության ակադեմիայի 2015թ. ուսումնական տարվա դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց բաշխումը ըստ փորձաշրջանի ղեկավարների՝ համաձայն Հավելված 2-ի:
3. Հաստատել Արդարադատության ակադեմիայի 2015թ. ուսումնական տարվա քրեաիրավական մասնագիտացմամբ դատավորների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց փորձաշրջանի անհատական ծրագիրը՝ համաձայն Հավելված 3-ի:
4. Հաստատել Արդարադատության ակադեմիայի 2015թ. ուսումնական տարվա դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց փորձաշրջանի անհատական ծրագիրը՝ համաձայն Հավելված 4-ի:

Ռեկտոր **Ռ.Մելիքյան**